Թանահատ

Բնակչություն՝ 42

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 123 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 19 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1920 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ, լեռնային:

Գտնվում է Մեծ Հայքի Ծղուկ գավառում: Բնակավայրը գոյություն է ունեցել հնագույն ժամանակներում, ինչի մասին վկայում է 1975թ-ին: Թանահատի ավերակներում հայտնաբերված ուրարտերեն սեպագիր արձանագրությունը: Գյուղում գտնվում է նշանավոր Թանահատի վանքը, որի հիմնադրումը վերագրվում է 5-6-րդ դարերով:
Ղևոնդ Ալիշանի կարծիքով վանքի տեղում հեթանոսական շրջանում գոյություն է ունեցել Անահիտ աստվածամեհյանը: Վանքի շրջակայքում կան բնակավայրի, գերեզմանաքարերի, խաչքարերի մնացորդներ:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 26 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 20գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 60 գլուխ,
- խոզեր՝ 5 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 60: Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 25 հա աշնանացան:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1751 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1725 հա, որից՝
- վարելահող՝ 115 հա, խոտհարք՝ 8հա, արոտ՝ 777 հա, այլ հողատեսք՝ 824 հա
- բնակավայրերի հողեր՝ 14 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 4 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 5 հա
- ջրային հողեր՝ 4 հա